

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ

«.....» 2016 ԹՎԱԿԱՆ N – Ա

ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 605-րդ և «Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծ Պարնու համայնքի ավագանու 2016 թվականի փետրվարի 2-ի N 2 որոշմամբ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծ Պարնու համայնքի սեփականություն հանդիսացող՝ բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասերից Մեծ Պարնի, 24-րդ փողոց, թիվ 5/2 հասցեում գտնվող 0,0705 հեկտար մակերեսով և 155400 դրամ կադաստրային արժեքով հողամասը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 26012016-06-0026, 26.01.2016թ.) որպես նվիրաբերություն ընդունել Հայաստանի Հանրապետության սեփականություն և այն ամրացնել «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին՝ «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» երկրորդ ծրագրի շրջանակներում նախատեսված անասնաբուժական սպասարկման կենտրոնի շենքի կառուցման ու սպասարկման նպատակով օգտագործելու պայմանով:

2. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝

1) երկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծ Պարնու համայնքի ղեկավարի հետ կնքել սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նվիրաբերության պայմանագիր.

2) Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի հետ համատեղ ապահովել սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի հանձնման-ընդունման և գույքային իրավունքների պետական գրանցման աշխատանքները՝ այն իրականացնելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծ Պարնու համայնքի միջոցների հաշվին:

1. ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ	
«Հողամասը որպես նվիրաբերություն ընդունելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման	
1	Անհրաժեշտությունը
	«Հողամասը որպես նվիրաբերություն ընդունելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունումը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև 2014 թվականի օգոստոսի 6-ին կնքված վարկային համաձայնագրով հաստատված «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» երկրորդ ծրագրի շրջանակներում՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզում անասնաբուժական սպասարկման կենտրոնի շենքը կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասով ապահովելու անհրաժեշտությամբ:
2	Ընթացիկ իրավիճակը և առկա խնդիրները
	Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից իրականացվող «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» երկրորդ ծրագրի շրջանակներում նախատեսված է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզում անասնաբուժական սպասարկման կենտրոնի շենքի կառուցում, սակայն շենքի կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասը պատկանում է Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծ Պարնու համայնքին: Մեծ Պարնու համայնքի ավագանին 2016 թվականի փետրվարի 2-ին ընդունել է N 2 որոշումը՝ համապատասխան հողամասը Հայաստանի Հանրապետությանը նվիրաբերելու մասին:
3	Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը
	Հանրապետությունում գյուղի և գյուղատնտեսության զարգացման քաղաքականությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի նոյեմբերի 4-ի «Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարությունը և Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 1476-Ն որոշման պահանջներին համապատասխան: Նախագծի բովանդակությունը համահունչ է բնագավառում իրականացվող քաղաքականությանը:
4	Կարգավորման նպատակը և բնույթը
	«Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» երկրորդ ծրագրի իրականացման գլխավոր նպատակն անասնապահության զարգացման խթանումն է հանրապետության այն համայնքներում, որտեղ բնակչության եկամուտների հիմնական աղբյուրն անասնապահությունն է: Ծրագրով, այլ միջոցառումների թվում, նախատեսվում է նաև աջակցության ցուցաբերում համայնքներում և ֆերմերային տնտեսություններում իրականացվող անասնաբուժական

	<p>ծառայությունների մատուցման ոլորտին՝ կենդանիների առողջության պահպանման, վարակիչ հիվանդությունների կանխարգելման, արհեստական սերմնավորման աշխատանքները բարելավելու նպատակով: Համայնքային անասնաբույժների մոբիլիզացմանը, նրանց հմտությունների կատարելագործմանը, նրանց կողմից կլինիկական ծառայությունների մատուցման որակի բարձրացմանը կնպաստի նաև ծրագրի շրջանակներում հանրապետության տարբեր մարզերում, այդ թվում՝ Լոռու մարզում՝ անասնաբուժական սպասարկման կենտրոնի կառուցումը:</p> <p>«Հողամասը որպես նվիրաբերություն ընդունելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծով առաջարկվում է՝ ընդունել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Մեծ Պարնու համայնքի ավագանու 2016 թվականի փետրվարի 2-ի N 2 որոշմամբ պետությանը նվիրաբերվող՝ 0,7050 հեկտար մակերեսով, 155400 դրամ կադաստրային արժեքով հողամասը և այն ամրացնել «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին՝ «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» երկրորդ ծրագրի շրջանակներում նախատեսված անասնաբուժական սպասարկման կենտրոնի շենքի կառուցման ու սպասարկման նպատակով օգտագործելու պայմանով:</p>
5	<p>Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք</p>
	<p>Նախագիծը մշակվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի և «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից:</p>
6	<p>Ակնկալվող արդյունքները</p>
	<p>Առաջարկվող որոշման նախագծի ընդունման դեպքում կապահովվի ՀՀ Լոռու մարզի Մեծ Պարնու համայնքում ծրագրի շրջանակներում անասնաբուժական սպասարկման կենտրոնի շենքի կառուցումը, Լոռու մարզի Սպիտակի տարածաշրջանի համայնքներում կբարձրանա անասնաբուժական ծառայությունների մատուցման արդյունավետությունը:</p>

2. ՏԵՂԵԿԱՆՔ

«Հողամասը որպես նվիրաբերություն ընդունելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ ՀՀ պետական բյուջեում և տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների ավելացման կամ նվազեցման մասին

«Հողամասը որպես նվիրաբերություն ընդունելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ ՀՀ պետական բյուջեում և տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

3. ՏԵՂԵԿԱՆՔ

«Հողամասը որպես նվիրաբերություն ընդունելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտության բացակայության մասին

«Հողամասը որպես նվիրաբերություն ընդունելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունումն այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջացնում:

4. ՏԵՂԵԿԱՆՔ

Միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորություններին «Հողամասը որպես նվիրաբերություն ընդունելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի համապատասխանության մասին

«Հողամասը որպես նվիրաբերություն ընդունելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը չի հակասում Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորություններին:

5. ՏԵՂԵԿԱՆՔ

**«Հողամասը որպես նվիրաբերություն ընդունելու մասին» Հայաստանի
Հանրապետության կառավարության որոշման նախագծի կազմմանը և քննարկմանը
հասարակության մասնակցության մասին**

«Հողամասը որպես նվիրաբերություն ընդունելու մասին» Հայաստանի
Հանրապետության կառավարության որոշման նախագծի կազմմանը և քննարկմանը
հասարակությունը մասնակցություն չի ունեցել:

6. ՏԵՂԵԿԱՆՔ

**«Հողամասը որպես նվիրաբերություն ընդունելու մասին» Հայաստանի
Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ հասարակության
իրազեկվածության մասին**

«Հողամասը որպես նվիրաբերություն ընդունելու մասին» Հայաստանի
Հանրապետության կառավարության որոշման նախագծի էլեկտրոնային տարբերակը, մինչև
նախագիծը ՀՀ կառավարության նիստի քննարկմանը ներկայացնելը, տեղադրվելու է ՀՀ
կառավարության ինտերնետային կայքում՝ e-gov.am հասցեում: